



վարչութիւնը իրեն շնորհած է տարեկան բոլոր պարտադիր վճարումները: Երախտագիտութեան լաւագոյն արտայայտութիւնն էր այս, հանդէպ իր բարերարներուն, Մխիթարեան Միաբանութեան, որ կը հոգար իր համալսարանական տարեթուակը: Յաջողութիւններուն համընթաց, դժբախտաբար դառն անակնկալներ ցցուած են իր դէմ՝ խափանելու եւ կասեցրնելու եռանդուն պատանիին վերելքը, ծանր մտահոգութեան մատնելով նաեւ ծնողները:

Բայց Աստուծոյ օրհնութեամբ, ու շնորհիւ իր ծանրախոհ եւ զուարթ բնա-

ւորութեան ու մանաւանդ իր անընկճելի կորովին, Աղեքսանդր հասաւ իր երազած այս գեղեցիկ օրուն:

Քննութիւններէն ամիս մը չանցած՝ կը ներկայացնէ նաեւ իր աւարտաճառը, « Patogenesi della tubercolosi post-primaria da perforazioni linfoghiandolari nei bronchi » տիտղոսով, զոր տեսական փաստերով ու խոր ուսումնասիրութեամբ պաշտպանած է, արժանանալով դոկտորականին:


Լեցի որ երբ Աղեքսանդր մտադիր էր բժշկութեան ուսանող արձանագրուելու, նամակ մը գրած է իր բժիշկ ազգականներէն մէկուն, յայտնելով իր նպատակը. պատասխանը եղած է յուսարեկիչ, հեռապատկերով՝ բժիշկի մը բարոյական ծանր պատասխանատուութիւններուն...: Բայց պատանին չէ վարանած, եւ երկրորդ նամակով մը պարտադրած է ինքզինքը, յարելով՝ թէ ինքը կատարելապէս ինքնաթափար համոզումով կը ձկտի մարդասիրական եւ դիտական այդ ասպարէզին, ի դին ամէն զոհողութեան:

Ու հիմա, սիրելի Աղեքսանդր, բաց է ասպարէզը քու առջեւ. վսեմ գաղափարականիդ արժանավայել նուիրումով՝ քալէ դէպի լուսաւոր ասպարէզ:

Մեր ջերմագին ուրախակցութիւնները քեզի, յատկապէս հայրիկիդ ու մայրիկիդ, որոնց յոյսն ես և արդար հպարտութիւնը:

Յաջողութիւններ:

Հ. ՆԵՐՍԷՍ ՏԵՐ ՆԵՐՍԷՍԵԱՆ



Մ Ո Ւ Ր Ո Տ — Ռ Ա Փ Ս Յ Է Լ Ե Ս Ն Վ Ա Ր Ժ Ա Ր Ա Ն Ի

1954-Ի ՇՐՋԱՆԱՒԱՐՏՆԵՐԸ



Ձախէմ աջ՝ Մարգարեան Սերոր, Կիւրեղեան Արմէն, Արզումանեան Արզար, Խաչատուրեան Պօղոս, Հեքիմեան Պերճ, Յովհաննէսեան Գասպար, Քիւչիւքեան Անտոն:
Վ.Վ. Հայրեր — Հ. Սահակ Վրդ. Տէր Մովսէսեան (Ուսուցիչ), Հ. Եղիա Վրդ. Փէշեկեան (Տեսուչ), Հ. Աւետիք Վրդ. Թալաթիւեան (Ուսումնապետ):

Տասնեակ մը տարիներու տխուր դադարէն վերջ, ահա՛ յետ — պատերազմեան առաջին հունձքը, անդրանիկ շրջանաւարտները (13 Յունիս, 1954): Եօթն են անոնք, ու բարձր գաղափարական մը կը շղթայէ անոնց արտերը. տարբեր երկիրներէ եկած, Յունաստանէն, Ֆրանսայէն, Սիւրիայէն, Իտալիայէն, կերտուեցան անոնք Մխիթարի շունչով, Մուրադի եւ Ռափայէլի նուիրական յարկին տակ, կրօնքի եւ հայրենիքի անշէջ պաշտամունքով:

Հրճուեցան անդամ մըն ալ հոգիները բարերարներուն, ցնծացին անդամ մը եւս դէմքերը լուսափայլ նախորդներուն՝ Թեր-

ղեանի, Արփիարեանի, Վարուժանի, որոնց խլած երբեմնի ծափերը կարծէք դեռ կ'արձագանդէին դահլիճին չքնաղ կամարներուն տակ. նոյն ողբերգութիւնն էր որ կը վերակենդանանար:

Ձահը, զոր վառեցին անմահները, հիմա ժառանգութիւնն է ասոնց, որ պատրաստ են զոհաբերուելու անոր պայծառութեան. ջահն է այն մշտափառ՝ հայ մշակոյթի եւ նուիրական արթութիւններու, որ կը ճարճատի Սուրբ Մեսրոպի լուսաւոր օրերէն, ու կը փայլի Մեծն Մխիթարի եւ Ալիշանի հսկայ արդիւնքով. եւ պիտի շողայ յաւէտ՝ անձնուէր ճիգերովը նոյն սերունդին: